ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան, Գ. Քոչարի 21[ա]

☎ 54-35-02

03 /02/2015թ.

«ԳԱԿ - ՇՀԾՁԲ-11/1» ծածկագրով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին
ըստ ցանկի

Հարգելի մասնակից

« ԳԱԿ - ՇՀԾՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոնի» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայությունը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում **«ԿԸՀ-ՇՀԾՁԲ-11/1/1»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ քան 2015թ. փետրվարի 12-ը, ժամը 10[30] -ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Երանուհի Սամվելյանը:

Հայտերը կբացվեն 2015թ. փետրվարի 12-ին, ժամը 10[30]-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար շարժական ինտերնետ ծառայության մատուցումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար՝ շարժական ինտերնետ ծառայության մատուցման (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 4), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 4.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով՝ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ YeranuhiS@elections.am:

Առդիր՝ 9 էջ:

Հարգանքով՝

Լ.Գրիգորյան

Կատարող՝ Ե.Սամվելյան, հեռ 56-28-57